ներուն տրուեցան. վտարուեցաւ Հայոց պատրիարքը իր աթոռանիստ եկեղեցիէն, ու հայ կրօնաւորները ցրուեցան. նոյն հալածանքը ո՛րքան սաստիկ եղած է որ պատրիարքը կը թողու Եգիպտոսը և կը մեկնի Երուսաղէմ։

Պատրիարքին տարագրութեան առթիւ չահեկան է նոյնիսկ Աբուսահլի խօսքերը դնել հոս Հ. Ալիշանի թարգմանութեամբ, զոր կատարած է անգլերէնի վրայէն։

«Երբ զուզք և քուրտք տիրեցին Եգիպտոսի (1169), զունդ մի քրիստոնեայ Հայոց՝ վրայ հասան այս սեւերուն, և շատերը սպաննելով՝ մնացեալները վռնտեցին. և անոնց բնակած թաղն որ մօտ էր Ալ–Համրայի (թաղ) անբնակ մնալով՝ Հատալպա Ղուզի մականուանեալ Դահիրէի վալին գնեց, և մշակութեան երկիր դարձուց տեղը»։

«Հայոց պատրիարքն.— Այս պատրիարքս նախ Եգիպտոս էր Իթֆիհի (որ հիմայ Սֆֆիհ صفا կոչուի, և փոքր քաղաք մ'է ի հարաւակողմ Դահիրէի, իբր 2800 բնակչօք), յետոյ Ալ–Հաֆիզի խալիֆայութեան ատեն՝ (1130–49) մտածեց պատրիարք ըլլալ, կաշառք տալով։ Դաչինք դրաւ ամիրապետին հետ, անոր պատմական զիտութիւններ հաղորդելու. և սա՝ հաճելով՝ թոյլ տալու անոր՝ որ չաբաթն երկու անգամ՝ երկուշաբթի և հինգշաբթի, գայ ի պալատ, էմիրներու և պաշտօնէից հետ. նաև տօնական օրեր, զինքը բարեւելու, և նոր գտած տեղեկութիւններ տալու։ Այս կերպով երբ պատրիարքն այցելութեան գար ի Զըմբըխտեայ պալատն, կու հաղորդէր ինչ որ գտեր էր ի կենսագրութիւնս, ի պատմութիւնս պատերազմաց, ի ժամանակագրութիւնս և ի տարեգիրս առաջին տիրապետաց. և այս կերպով զբուցակից կ'ըլլար Ալ–Հաֆիզի հետ, ինչուան ասոր մահը, որ հանդիպեցաւ Երկրորդ Ճումատա ամսոյն 544 տարւոյ» (Հիճր. որ է Փրկչին 1149)։

«Վերոյիշեալ վանքէն դուրս՝ բայց ոչ հեռի բրտարանէն, (հողէ ամաններու գործարան) զատ փոքր եկեղեցի մի կար, Ալ–Ամիր պի–Ահքամի՛լլահ խալիֆային ատեն չինուած (որ է Նախորդ Հաֆիզի), ի պէտս Մելքիտաց, փոխանակ Հարա Զաուիլայի մէջ եղած եկեղեցւոյն, որ և աւրուած էր անոր ատեն, և Հաֆըզի ատեն ի մզկիթ փոխուեցաւ...։ Կամարներու վրայ չինուած էր եկեղեցին. Ներքևն ալ մեռելոց համար դերեզմանատուն մի